ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից աշխարհում հետզհետե ավելանում են տնտեսական հարաբերությունների բարդ շղթայական գործընթացները: Հասարակության կյանքում ներկայիս գիտական, արտադրական և տեխնոլոգիական նվաճումները ավելի ու ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում բարիքներից օգտվելու համար: Այս մթնոլորտը խտանալով՝ ստեղծում է անդադար և բարձր տեմպերով ուժգնացող մրցակցություն հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում և այդ մրցակցությունը բազմաշերտ է: Մրցակցում են անհատները՝ ժամանակի մեջ ավելի շատ բարիքներ ստեղծելու, ավելի բարեկեցիկ կյանք ստանալու համար, մրցակցում են ձեռնարկատերերը իրենց ապրանքները և ծառայությունները շուկաներում առավել ներկայանալի դարձնելու համար, մրցակցում են պետությունները առավել որակյալ հանրային բարիքներ ստեղծելու և բաշխելու համար: Այս անդադար մրցավազքում ի լրումն ռեսուրսների, դրանց ծավալների, տնօրինման և տիրապետման միջավայրի, հնարավորությունների, գիտական նվաճումների և այլ արժեքավոր ձեռքբերումների, հաղթանակի որոշիչ դերակատարություն ունի մեկ ընդհանրական կարողություն՝ ռեսուրսների արդյունավետ կառավարումը, որի ազդեցության աստիճանը ներկայիս հասարակական-տնտեսական կյանքում, այն դարձնում է ամենաարդիականը: Միջազգային առևտրի և ֆինանսական գործառնությունների նորարական գործիքակազմերի առաջացմամբ և զարգացմամբ պայմանավորված՝ բազմաթիվ դրվագներում ավանդական կառավարման համակարգերը մեծապես արդիական չեն, ուստի համարժեք կառուցակարգերի ստեղծումը և կիրառումը հրամայական է արդյունավետ կառավարման համար:

Կառավարման գործընթացում վերահսկողության դերը առանձնահատուկ է, քանի որ դրանից է կախված թե արդյո՞ք այն ինչ ներկայացվում է համապատասխանում է իրականությանը: Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողությունը ունի որոշակի առանձնահատկություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանրային ֆինանսների կառավարման

գործընթացում, մասնավոր շահը փոխարինվում է հանրային շահով, ինչի արդյունքում ընդգծվում է նաև վերահսկողության դերը և արդիականությունը:

ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում կարևորվում է ռազմավարական պլանավորման և քաղաքականությունների մշակման, ինչպես նաև արդեն իսկ գործող և ապագայում ընդունվելիք ռազմավարությունների կառավարության հնգամյա ծրագրերի, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և ամենամյա ծրագրային բյուջեի հետ համակցելու անհրաժեշտությունը: Այս ամենի հետ մեկտեղ, նույնքան կարևոր է նշված գործընթացին համահունչ և ներդաշնակ վերահսկողական կառուցակարգերի մշակումը և ներդրումը:

Անշուշտ, հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը և վերահսկողությունը կարևոր են կառավարման գործընթացում, որը կայուն զարգացման և հասարակության ընդհանուր բարեկեցությանը հասնելու առանցքային ուղղություն է: Ատենախոսությունը նվիրված է հանրային ֆինանսների կառավարման գործընթացում վերահսկողական համակարգերի և գործիքակազմի կատարելագործմանը, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում գործող վերահսկողության համակարգի կատարելոգործման ուղիներ:

Ատենախոսության նպատակով պայմանավորված առաջադրվել են ներքոհիշյալ խնդիրները.

- ուսումնասիրել հանրային ֆինանսների տեսական հիմքերը և կառավարման գործընթացը, վերլուծել այդ ուղղությամբ առկա միջազգային ընկալումները և փորձը,
- վերլուծել բյուջետային գործընթացի իրականացման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերը ՀՀ-ում,
- բացահայտել ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները,
- մշակել բյուջետային ծրագրերի և միջոցառումների դասակարգման նոր մոտեցումներ և կառուցակարգեր՝ դրանց իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողության համակարգի բարելավման նպատակով,
- առաջարկել բյուջետային միջոցառումների արդյունքային ցուցանիշների մշակման նոր եղանակներ և մոտեցումներ՝ դրանց նկատմամբ արդյունավետության վերահսկողության իրականացման նպատակով,
- ներկայացնել պլանավորման փուլում վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները,

• հանրային ֆինանսների կառավարման համատեքստում դիտարկել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը, բացահայտել դրանց նկատմամբ վերահսկողության գործընթացի հիմնախնդիրները,

• մշակել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 134 էջերի վրա՝ առանց հավելվածների:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտի վերահսկողության համակարգի տեսամեթոդաբանական հիմնահարցերը» գլխում ներկայացվում է «հանրային ֆինանսներ» հասկացությունը, «հանրային ֆինանսների կառավարման» նշանակությունը, ինչպես նաև հանրային ֆինանսների և վերահսկողության համակարգի վերաբերյալ միջազգային ընկալումները: Անդրադարձ է կատարվում հանրային ֆինանսների բովանդակությանը՝ քննարկելով փող և ֆինանսներ հասկացությունները: Ներկայացվում են Ֆինանսների համար տարբեր հեղինակների կողմից տրված տարաբնույթ ձևակերպումներ, որոնց վերլուծության արդյունքում կարելի է պնդել, որ ֆինանսագիտության զարգացման ընթացքում ֆինանսներ հասկացությունը ընկալվել է հենց հանրային ֆինանսների մակարդակում՝ ըստ պետական և համայնքային եկամուտների և ծախսերի:

Ատենախոսության երկրորդ՝ «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում, ուսումնասիրվել Է Հայաստանի Հանրապետության ներկայիս պետական կառուցվածքին և վարչատարածքային բաժանմանը համապատասխան գործող բյուջետային համակարգը:

Ներկայացվել է ՀՀ-ում պետական բյուջեի նախագծի մշակման և կատարման գործընթացը, ինչպես նաև ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման և վերահսկողության բազմաշերտ համակարգը:

Ուսումնասիրվել են ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի կազմակերպաիրավական հիմնախնդիրները, ինչի շրջանակներում վերլուծություն է իրականացվել 2025 թ. բյուջետային ծրագրերի և միջոցառումների, ինչպես նաև վերջնական արդյունքի չափորոշիչների մասով՝ բացահայտելով բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունքային ցուցանիշների սահմանման և գնահատման գործընթացի, ինչպես նաև ռազմավարությունների և բյուջետային միջոցառումների կազմման նկատմամբ պլանավորման փուլում վերահսկողական համակարգերի վերաբերյալ հիմնախնդիրները:

Աշխատանքի այս մասում ներկայացվում է նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների նշանակությունը և դրանց գործունեությանն առնչվող մարտահրավերները:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» գլխում ներկայացվում է աշխատանքում առաջ քաշված հիմնախնիրների վերաբերյալ առաջարկվող լուծումները, մասնավորապես բյուջետային ծրագրերի և միջոցառումների նոր դասակարգումը, որին համապատասխան բյուջետային ծրագրերը ըստ նշանակության դասկարգվել են ֆիքսված ծախսերի և ռազմավարական ծրագրերի: Յուրաքանչյուր դասի համար մշակվել են վերջնական արդյունքի չափման տարբեր կիրառական մոտեցումներ՝ տարանջատելով տվյալ միջոցառման շրջանակներում իրականացվող ծախսի տեսակները: Յուրաքանչյուր դասի միջոցառումների համար ներկայացվել են պլանավորման փուլում վերահսկողության հիմնական ուղղությունները՝ նկարագրելով յուրաքանչյուր ուղղությամբ իրականացման ենթակա վերահսկողական աշխատանքները: ՀՀ առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի կառավարման վերահսկողության համակարգի կատարելագործման նպատակով՝ առաջ քաշված հիմնախնախնդիրների համար ներկայացվել են լուծման եղանակներ:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը և դրանց գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունը առանձինապես արժեքավոր է գիտական նորույթների կարևորության տեսանկյունից, որոնք մասնագիտական հիմնավորված են և դրանց կիրառման

դեպքում էականորեն կարող են բարելավել ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգը:

Հեղինակի կողմից վեր են հանվել ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման և վերահսկողության բազմաշերտ համակարգում առկա գործառույթները, ինչի արդյունքում ընդգծվել են գործող համակարգի մի շարք թերություններ, որոնցից առավել ընդհանրական է պլանավորման փուլում վերահսկողության համակարգի անկատարությունը:

Որպես աշխատանքի դրական կողմ անհրաժեշտ է առանձնացնել հեղինակի օգտագործած հարուստ և ամբողջական գրականության ցանկը: Այսպիսի գրականության ընդգրկումը վկայում է այն մասին, որ հեղինակը տիրապետում է, ինչպես հանրապետության հանրային ֆինանսների կառավարման ոլորտի առանձնահատկություններին, այնպես էլ դրա միջազգային ընկալումներին, առաջավոր փորձին և համաշխարհային զարգացումներին:

Հետազոտության արդյունքներն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական արժեք՝ հնարավորություն տալով հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգը դիտարկել ոչ թե միաչափ, այլ որպես բարդ ու բազմաստիճան ինստիտուցիոնալ կառուցվածք:

Ատենախոսության շրջանակներում ձեռք բերված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության քաղաքականության ձևավորման, բյուջետային գործընթացի բարելավման, ֆինանսական վերահսկողության նոր մոտեցումների սահմանման ժամանակ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում՝

✓ մշակվել է բյուջետային ծրագրերի և միջոցառումների նոր դասակարգում, ինչը հնարավորություն կտա ապահովել այդ ծրագրերի ֆինանսական գնահատականի և դրանց հաշվարկների հիմքում դրված բաղադրիչների միջև կապը,

✓ մշակվել են բյուջետային ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման և գնահատման նոր մոտեցումներ, ինչը կնպաստի ինչպես ծրագրերի կանոնավոր գնահատմանը, այնպես էլ դրանց արդյունավետության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը,

✓ վերահսկողությունը դիտարկելով որպես կառավարման յուրաքանչյուր գործառույթի նկատմամբ իրականացվող գործընթաց՝ ներկայացվել է բյուջետային

միջոցառումների պլանավորման փուլում վերահսկողության իրականացման մոտեցում՝ միջոցառումների յուրաքանչյուր խմբի համար վերահսկողության իրականացման ուղղությունների մշակմամբ,

✓ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը դիտարկվել է հանրային ֆինանսների կառավարման համատեքստում՝ մշակելով դրանց կողմից հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ և թերություններ, որոնցից հիմնականներն են՝

1. Ցանկալի կլիներ, որ աշխատանքում հստակեցվեր, թե հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության գործառույթի մակարդակի բարելավվումը ինչպիսի՞ քանակական ազդեցություն կունենա կառավարման տարբեր գործառույթների՝ (կազմակերպում, մոտիվացիա և այլն), արդյունավետության մակարդակի փոփոխման վրա:
2. Ատենախոսության 48-րդ էջի 2-րդ պարբերությունում նշվում է «պետական սեփականության օգտագործման...» ձևակերպումը, տեսական հիմնավորվածության տեսանկյունից առավել ճիշտ կլինի օգտագործել «պետական ունեցվածքի օգտագործման» տերմինը:
3. Ատենախոսությունը առավել շահեկան վիճակում կհայտնվեր, եթե հեղինակը հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունը գնահատելու ընթացքում կարողանար դրանց ծախսերի և ստացված արդյունքների չափողական համարժեք քանակական ցուցանիշներ օգտագործել՝ հաշվի առնելով ժամանակի գործոնի ազդեցությունը:
4. Ատենախոսության 21-րդ էջում նշվում է «եկամտի և հարստության արդարացի բաշխման» գործառույթի մասին: Ցանկալի կլիներ, որ հեղինակը մեկնաբաներ թե տեսական հիմնավորվածության և գործնական կիրառման տեսանկյունից ի՞նչ մեթոդաբանությամբ է հնարավոր այն մշակել և կիրառել:
5. Ատենախոսության 98-րդ էջում ներկայացված է աշխատանքի արդյունավետության ցուցանիշը, որտեղ օգտագործվում է գործառույթի բարդության գործակից եզրույթը, սակայն պարզ չէ, թե ի՞նչ մեթոդով է հաշվարկվում այն և ի՞նչ հիմնավորումով է այն փոփոխվում 1-ից 2 միջակայքում:
6. Կառաջարկեի 100-րդ էջում «ռազմավարական ծրագրերի» 5-րդ աղյուսակում կրթության ոլորտում ավելացվեր «կրթության ոլորտում միջազգային վարկանիշավորումով համեմատական բարձր տեղ գրված

համալսարանների թվաքանակով», իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ «արհեստական բանականություն» ինստիտուտի ներգրավումով:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և բացասաբար չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Սարգիս Խաչատուրի Թևոսյանի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, գիտական արժեք, ինքնուրույն հետազոտություն է, որի շրջանակներում հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածներում, դրանք ներառված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ս.Ա.ԴԱՎՈՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ԱՇՈՏԻ ԴԱՎՈՅԱՆԻ
ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

21 մայիսի 2026թ.